



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Արովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. hասցե abovyan.kotayq@mta.gov.am

26-ը ապրիլի 2023թ.

Արովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի ուղերձի ապրիլի 26-ի՝
Սահմանապահի օրվա առիթով

Ապրիլի 26-ը Հայաստանի Հանրապետությունում նշվում է որպես Սահմանապահի օր:
Մասնագիտական օրվա կապակցությամբ սրտանց շնորհավորում եմ ՀՀ պաշտպանության նախարարության սահմանապահ զինվորականներին, սահմանային գոտում ժամկետային և պայմանագրային ծառայություն իրականացնող զինծառայողներին և ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերին:

Մեր հայրենիքի սահմանների պաշտպանության, Հայաստանի պետական սահմանի անցման կետերում անվտանգության, կարգուկանոնի պահպանման առաջին երաշխավորը սահմանապահն է:

Անօրինակ սխրագործություններով ու նվիրումով են հայկական բանակի սահմանապահ զինծառայողները տարիներ շարունակ ապահովել մեր հայրենիքի սահմանների անառիկությունը, իսկ վտանգի ժամանակ աներկբա ներգրավվել թշնամու դեմ մղված մարտերում, քաջաբար պայքարել՝ չխնայելով հաճախ ամենաթանկը՝ կյանքը:

Հավերժ փառք ու պատիվ հայրենիքի պաշտպանության համար նահատակված սահմանապահ զինծառայողներին:

Հայրենասիրության, ուժի, մտավոր բարձր ունակությունների և ֆիզիկական պատշաճ պատրաստվածության շնորհիվ՝ մեր սահմանապահները մինչ օրս սահմանային գոտում կանխում են հակառակորդի սադրանքները և պատրաստակամորեն շարունակում իրականացել ամենօրյա բարդ, պատասխանատու, բայց և պատվաբեր ծառայությունը:

Հարգարժան սահմանապահներ.

Անչափ կարևոր և գնահատելի է ձեր աշխատանքը անվտանգություն, խաղաղություն և կայունություն հաստատելու հարցում: Կրկին շնորհավորում եմ ձեզ մասնակցիտական օրվա կապակցությամբ և մաղթում՝ քաջառողջություն, զգոն ու անվտանգ հերթապահություն և, որ ամենակարևորն է, խաղաղություն Հայաստան-Արցախ աշխարհում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ